



Տեղական զարգացման ռազմավարություն

LDS-ն սահմանում է տեղական խնդիրները և կենտրոնանում սոցիալ-տնտեսական, մշակութային և բնապահպանական խնդիրների կոնկրետ լուծումներով՝ հետագա զարգացման հնարավորություններ նախապատրաստելով: Այդ նպատակներին հասնելու համար LDS-ն առաջարկում է հաջորդ հիմնական քայլերը, Բարելավել կյանքի որակը, դիվերսիֆիկացնել տեղական տնտեսությունը, ինտեգրել տեղական բնակչությանը և մոնիթինգի պալիտեստն ավելի լավ վայր դարձնել:

«Շրջանի տնտեսական զարգացման և աճի համար հարկավոր է առաջատար ուղղությունների բացահայտում և ուսումնասիրում, որը ճշգրտորեն արտացոլված է նշված փաստաթղթում: Հարկավոր է բացահայտել տեղական պոտենցիալը, որպեսզի դրա հիման վրա ֆինանսավորվի դրամաշնորհային առաջարկը» – հայտարարեց տեղական զարգացման խմբի ղեկավարի տեղակալ Մախարե Մացուկատովը:



Դրամաշնորհային մրցույթ

Ախալքալաքի տեղական զարգացման խմբի (LAG) կողմից հայտարարված առաջին դրամաշնորհային մրցույթի շրջանակներում ստացել ենք ընդամենը 126 շահերի արտահայտման ձև: Երկրորդ փուլիում մասնակցությունը կշարունակեն 54 թեկնածուներ: Հաջորդ փուլ անցած թեկնածուների համար կանցկացվի թրեյնինգներ և խորհրդատվություններ

Լրիվ դիմումը լրացնելու վերաբերյալ: Դրամաշնորհային ծրագրի գլխավոր նպատակը Բարելավել կյանքի որակը, դիվերսիֆիկացնել տեղական տնտեսությունը, ինտեգրել տեղական բնակչությանը և տարածաշրջանը դարձնել լավագույն բնակատեղին:

Ախալքալաքի LAG-ի անդամների հանդիպումը ՄԱԿ-ի սննդի և գյուղատնտեսության կազմակերպության ներկայացուցիչների հետ

Ընթացիկ տարվա, ապրիլի 18-20 սննդի և գյուղատնտեսության կազմակերպության (UN FAO) ներկայացուցիչները աշխատանքային այցով գտնվում էին Ախալքալաքում: Այցը իրագործվեց նախագծի «գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումը Ախալքալաքում» համակազմակերպմամբ: Այցի շրջանակներում անցկացվեց հանդիպումներ Ախալքալաքի տեղական զարգացման խմբի անդամների հետ, որտեղ

քննարկվեց խմբի ապագա պլանները և ընթացիկ ակտիվությունները: Դրանից բացի, հանդիպումներ անցկացվեցին մասնավոր և հանրային ոլորտի ներկայացուցիչների հետ, այդ թվում կարտոֆիլ և կաթ արտադրող գյուղատնտեսական կոոպերատիվների հետ, նաև ձուկ, մեղր և պանիր արտադրող ձեռնարկության ներկայացուցիչների հետ:

Եվրոպայի օր

Սույն թվականի մայիսի 16-ին Ախալքալաքի տեղական զարգացման խմբի (LAG)-ի անդամները նշեցին Եվրոպայի օրը: Եվրոպայի օրը Ախալքալաքիում Սամցխե-Ջավախեթի Նատոի և Եվրամիության տեղեկատվական կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվեց: Միջոցառմանը եկած հյուրերը հնարավորություն ունեին ծանոթանալու LEADER-ի նախագծին, առանձնապես նշանավոր էր տեղեկության հաղորդումը բնակչությանը դրամաշնորհային մրցույթի և տեղական զարգացման ռազմավարության վերաբերյալ:



Վրաստանի անկախության օրը Ախալքալաքիում

Ախալքալաքի տեղական զարգացման խմբի անդամները անկախության օրը նշեց Ջավախքի ազգային զբոսայգում ժողովրդի հետ հանդիպելով: Էկոլոգիան և բնապահպանությունը Ախալքալաքի ռազմավարության գլխավոր ուղղություններից մեկն է: Ջավախքի ազգային զբոսայգու վարչակազմի աշխատակիցները հետաքրքիր սեմինար անցկացրին պահպանված տարածքների նշանակության վերաբերյալ,

նաև քննարկեցին տարբեր էկո ապուրների ձևավորման և երիտասարդների համար կրթական սեմինարների անցկացման նշանակության հարցը: LAG-ի նախաձեռնությամբ դպրոցի աշակերտների և ուսանողների համար անցկացվեց տարբեր տեղեկատվական սեմինարներ և մաքրման միջոցառումներ գիտակցության բարձրացման համար բնապահպանման նշանակության հարցում:



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից՝ «Ախալքալաքում գյուղական զարգացման նոր մոտեցման խթանումը» ծրագրի շրջանակներում, որը իրականացնում է Վրաստանի Հանրային կապերի ինստիտուտը (GIPA)

<http://akhalkalakilag.ge>
<https://www.facebook.com/akhalkalakilag>

Գուսան Հավասու #7, 0700, Ախալքալաք, Վրաստան
info@akhalkalakilag.ge